

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ  
ԺԱՍՆ 10:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

**Խորհրդի անդամներ՝**

- S. Դավթյան ՀՀ էկոնոմիկայի նախարար
- Կ. Մինասյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
- Գ. Պողոսյան «Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի  
համակարգող
- Կ. Գալստյան «Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ» ՀԿ-ի գործադիր  
տնօրեն
- Կ. Մարտիրոսյան Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր  
տնօրեն

**Հրավիրվածներ՝**

- Դ. Սարգսյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
- Ս. Կարայան ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
- Ա. Օրբելյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
- Ա. Գրիգորյան Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի  
գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
- Վ. Հենլն Եվրոպայում անվտանգության և համագործակցության  
կազմակերպության երևանյան գրասենյակի տնտեսական և  
բնապահպանական ծրագրերի ղեկավար
- Ա. Նազարյան Միջազգային ֆինանսական կորպորացիայի հայաստան-  
յան գրասենյակի ներդրումային միջավայրի բարեփո-  
խումների ծրագրի ղեկավար
- S. Սուքիասյան Եվրոպայում անվտանգության և համագործակցության  
կազմակերպության երևանյան գրասենյակի տնտեսական  
ծրագրերի համակարգող
- Ե. Հովհաննիսյան «Հայաստանի տրանսպորտային առաքողների միություն»  
ՀԿ-ի նախագահ

Վ. Կարապետյան	ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի գործադիր տնօրեն
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ա. Եզանյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄՁ զարգացման վարչության պետ
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ

ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի երրորդ նիստում ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ողջույնի խոսքը

---

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը** ողջունեց ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի նիստի մասնակիցներին և նշեց, որ այս խորհուրդը մեծ առաքելություն ունի՝ խթանել Փոքր և միջին բիզնեսի զարգացումը մեր երկրում: Հարցն ունի քաղաքական բովանդակություն, որովհետև եթե փոքր բիզնեսը Հայաստանում չկայանա, մենք չենք կարողանա կառուցել քաղաքացիական հասարակություն: Դրա համար մենք խնդիրը դիտարկում ենք ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական տեսակետից: ՓՄՁ-ների զարգացման համար պարտավոր ենք ստեղծել ամուր հիմքեր: Համոզված եմ՝ մեր համատեղ աշխատանքը ցույց կտա այն ուղիները, թե ինչպես պետք է լուծել մեր առջև դրված խնդիրը: Տեղեկացրեց նաև, որ Հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրում ամրագրված է, որ պետք է ստեղծել ամուր հիմքեր փոքր և միջին բիզնեսի զարգացման համար: Միաժամանակ կարևորեց նաև այս ոլորտում առկա խնդիրների լուծման նպատակով խորհրդի հետ համատեղ աշխատանքը:

1. Կատարված աշխատանքների վերաբերյալ ՀՀ ՓՄՁ-ի զարգացման խորհրդի քարտուղարության հաշվետվության մասին

---

(Վ. Մինասյան, Դ. Սարգսյան, Ա. Եզանյան, Ա. Օրբելյան, Տ. Սարգսյան)

**4. Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) ընդունել ի գիտություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանի կողմից ներկայացված ՀՀ ՓՄՁ-ի զարգացման խորհրդի քարտուղարության հաշվետվությունը կատարված աշխատանքների վերաբերյալ:

2) ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին`

ա. ՈՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասինՈ, ՈՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1473-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասինՈ և «ՀՀ կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 27-ի N 887 որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը ներկայացնել մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստի քննարկմանը,

բ. հաշվետվության 4.1-ին կետն առանձին քննության առնել ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանի մոտ,

գ. հաշվետվության 4.2-րդ կետին անդրադառնալ խստացնող նորմեր պարունակող իրավական ակտերի ուժի մեջ մտնելու ժամկետների անճշտության պատճառով առաջ եկած խնդիրների պարագայում:

2. Գործարար համայնքի կողմից բարձրացված նոր հարցերի ներկայացում

-----  
(Գ. Պողոսյան, Կ. Մարտիրոսյան, Տ. Մարգարյան)

#### **4. Քննարկումներից հետո որոշվեց`**

1) հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին և ՀՀ ֆինանսների նախարար Կ. Գաբրիելյանին համատեղ ուսումնասիրել «Արտոնագրային վճարի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առաջացած խնդիրները և ներկայացնել համապատասխան տեղեկատվություն.

2) հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին` 15-օրյա ժամկետում ուսումնասիրել «Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող Գ. Պողոսյանի

և Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն Կ. Մարտիրոսյանի կողմից բարձրացված հարցերը և ներկայացնել համապատասխան լուծման տարբերակներ.

3) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ ներկայացնել պաշտոնական պարզաբանում «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի կիրարկման վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ